ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԵՅՆԱԼՅԱՆ ՆԱՆԵ ԱՐՏԱԿԻ

ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոգեբանություն ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ Հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2020

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի Պետական Համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վազգեն Հենրիկի Մարգարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ասյա Սուրենի Բերբերյան

հոգեբանական գիտությունների թեկնածու,
Գոռ Սուրենի Եսայան

Առաջատար կազմակերպություն՝ **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 12:00-ին, Երևանի Պետական Համալսարանում գործող ԲՈԿ-ի հոգեբանության 067 խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52 ա:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի Պետական Համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2020 թվականի հուլիսի 17-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների թեկնածու՝ Դ. Ռ. Հայրապետյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջին տարիներին տարբեր բնագավառներում շահեկանորեն աճել է անձի արժեհամակարգի նկատմամբ դրսևորվող գիտական հետաքրքրությունը: Պատճառների շարքում են այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են ներքին հասարակական խնդիրները, տարատեսակ տեղեկութային ներգործությունները, ինչպես նաև համընդհանրացմամբ պայմանավորված զարգացումները, որոնք հանգեցնում են ազգային, սոցիալական և մշակութային համակարգերի ձևախախտմանը:

Ժամանակակից քաղաքական և հասարակական կյանքում, անձի կենսագործունեության բոլոր ոլորտներում տեղեկույթի դերի աճին զուգընթաց, առավել հեշտ է արժեքային փոփոխությունների հասնել փափուկ ուժի կիրառությամբ, ինչն էլ նպաստում է, որպեսզի պատերազմներն առավելապես ընթանան տեղեկատվական տիրույթում: Վերոնշյալով պայմանավորված՝ մեր ուսումնասիրության կենտրոնում է հոգեբանական պատերազմի տեղեկութային ասպեկտը:

Այսօր տեղեկատվական պատերազմի ներգործության ուսումնասիրությունն անձի արժեհամակարգի ձևավորման վրա կարևորվում է Ղարաբաղյան հակամարտությանն ուղեկցող հոգեբանական պատերազմի հետևանքները պարզելու տեսանկյունից: Այս համատեքստում հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է անձի արժեքների փոխակերպմանն ուղղված հակառակորդի տեղեկութահոգեբանական ներգործությամբ, հայ-ադրբեջանական հակամարտության տևականությամբ, քանի որ զինադադարի պայմանագրի կնքումից հետո հակամարտության գործընթացներն առավել մեծ չափով տեղափոխվել են տեղեկատվական պայքարի տիրույթ, ինչպես նաև ժողովրդավարական գործընթացներով, որոնք նպաստել են խոսքի ազատության մշակույթի ձևավորմանը, որն էլ խոչընդոտում է հոգեբանական պայքարի համընդհանուր ռազմավարության կիրառմանը:

Հետազոտության նպատակը: ՈՒսումնասիրել հոգեբանական պատերազմի պայմաններում տեղեկույթի ներգործությամբ պայմանավորված անձի արժեհամակարգի բաղադրատարրերի դրսևորման առանձնահատկությունները:

Հետազոտության վարկածը: Անձի արժեհամակարգի բաղադրատարրերի առանձնահատկությունները հոգեբանական պատերազմի պայմաններում ենթարկվում են փոփոխության՝ նրա կյանքի նպատակներով և էքզիստենցիալությամբ պայմանավորված:

Հետազոտության օբյեկտը անձի արժեհամակարգն է:

Հետազոտության առարկան հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի դրսևորման առանձնահատկություններն են:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել է հետևյալ խնդիրների շարքը՝

1. Հետազոտել անձի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրները ժամանակակից գիտակարգերում,

2. Վերլուծել ինչպես Ադրբեջանի, այնպես էլ հայկական ԶԼՄ-ներում ներկայացված տեղեկույթի առանձնահատկությունները և ձևակերպել դրանց օրինաչափությունները,

3. Հետազոտել և պարզել համացանցից օգտվելու ակտիվության ցուցանիշը և լրատվական կայքերում ներկայացվող տեղեկույթի ընկալման հոգեբանական օրինաչափությունները՝ շփման գոտում և դրանից դուրս բնակվողների շրջանում,

4. Հետազոտել Արցախում և ՀՀ-ում բնակվողների շրջանում առկա արժեքային տարբերությունները: Բացատրել անձի արժեհամակարգի փոխակերպման միտումները հոգեբանական պատերազմի պայմաններում,

5. Փորձարարական ճանապարհով պարզել և վերլուծել անձի արժեհամակարգի, էքզիստենցիալության և կյանքի նպատակների ձևավորման փոխպայմանավորվածությունը,

6. Պարզորոշել անձնային առանձնահատկությունների և արժեհամակարգի ձևավորման փոխպայմանավորվածությունը:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Ստացված տվյալները կարող են կիրառվել լրագրողների վերապատրաստման ծրագրերում՝ տեղեկույթի ներկայացման առանձնահատկությունները հաշվի առնելու նպատակով, տեղեկույթի միջոցով արտակարգ իրավիճակների կառավարման, ԶԼՄ-ներում ներկայացվող տեղեկույթի արդյունավետության կանխատեսման նպատակով, ուսուցիչների, դասավանդողների վերապատրաստման ընթացքում՝ երիտասարդների արժեհամակարգի ձևավորման հարցում դրական դերակատարություն ունենալու նպատակով: Կատարված վերլուծությունները կարող են նպաստել արժեհամակարգի ձևավորման մոտեցումների մշակման, էքզիստենցիալ ճգնաժամերի հաղթահարման ուղիների մշակման, ինչպես նաև հոգեթերապևտիկ աշխատանքներում և պատերազմի մասնակիցների հետ իրականացվող հոգեվերականգնողական աշխատանքներում:

Գիտական նորույթը: Հետազոտական տվյալների քանակական և որակական վերլուծությամբ ստացված արդյունքները հնարավորություն տվեցին պարզելու պատերազմական և ոչ պատերազմական պայմաններում բնակվող անձանց արժեհամակարգի առանձնահատկությունների դրսևորման տարբերու-

թյունները և այդ արժեքների ձևավորման պայմանները: Ապացուցվել է անձի էքզիստենցիալության ու կյանքի նպատակների փոխպայմանավորվածությունը: Բացահայտվել է անձի արժեքների հիերարխիկ տարբերությունները՝ պայմանավորված շփման գոտում և շփման գոտուց դուրս բնակվելու հանգամանքով:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Անձի արժեքների ձևավորումը երկկողմ գործընթաց է, որտեղ հասարակությունն ազդում է անձի արժեքների ձևավորման վրա, իսկ անձն էլ իր հերթին նպաստում է հասարակության արժեքների փոխակերպմանը: Անձի արժեքային համակարգի ձևավորումը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններով, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

2. Լրատվամիջոցների կողմից կիրառվող տեղեկութային-հոգեբանական ներազդեցության հնարները կարող են ազդել տեղեկույթը սպառողի կողմից ներկայացված տեքստերի ընկալման վրա: Ադրբեջանական մամուլում մեծ տեղ են գրավում ծաղրի և լռեցման մանիպուլյատիվ հնարքները, իսկ հայկական մամուլում՝ տեղեկույթի կրկնողությունը և հեղինակության վկայակոչումը: Հարևան հանրապետության տեղեկատվական տիրույթում առավելապես գերիշխում է հայատյացության մթնոլորտը:

3. Շփման գոտում և դրանից դուրս բնակվողների շրջանում համացանցից օգտվելու ակտիվության տարբերությունները չեն ազդում տեղեկույթի ընկալման առանձնահատկությունների վրա: Միևնույն ժամանակ, կախված տեղեկույթի աղբյուրից՝ գոյություն ունեն ընկալման տարբերություններ. ադրբեջանական կայքերից տեղեկույթի ստացման պարագայում թշնամու կերպարն ազդում է տեղեկույթի իրական հուզական բովանդակությունն ընկալելու վրա:

4. Շփման գոտում և դրանից դուրս բնակվող անձանց շրջանում (Արցախում և ՀՀ ոչ սահմանամերձ շրջաններում) արժեքների հիերարխիան փոփոխվում է. շփման գոտում որպես կարևոր արժեք է հանդես գալիս անվտանգությունը, ինչը շփման գոտուց դուրս բնակվողների շրջանում բացակայում է առաջին եռյակից:

5. Անձի արժեհամակարգի, կյանքի նպատակների ձևավորման և էքզիստենցիալության միջև գոյություն ունի փոխպայմանավորվածություն: Մասնավորապես, էքզիստենցիալության ապրումը պայմանավորված է անձի ապագայի նպատակների առկայությամբ, ինչն էլ կյանքին իմաստ և ուղղվածություն է հաղորդում:

6. Էքզիստենցիալությունը փոփոխությունների չի ենթարկվում պատերազմական գործողությունների և հրադադարի պահպանման ռեժիմի ընթացքում: Սակայն արտակարգ իրավիճակների ապրման պարագայում արձանագրվում է վերջինիս դրսևորման փոփոխություն:

7. Էքզիստենցիալությունը պայմանավորված է արտակարգ իրավիճակների անմիջական ապրումով և կարող է տարբեր դրսևորումներ ունենալ մարտական գործողություններին մասնակցած և չմասնակցած երիտասարդների շրջանում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, դրույթները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, հետազոտության փուլերը և ընտրանքը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, թեկնածուական աշխատանքի փորձաքննությունը:

Աշխատանքի առաջին՝ «Հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի փոխակերպման հիմնախնդրի հետազոտման տեսական-մեթոդաբանական հիմքերը» գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Անձի արժեհամակարգի ձևավորման հոգեբանական հիմքերը և նախադրյալները», ներկայացվում է փիլիսոփայական և հոգեբանական գիտության բնագավառում անձնային արժեք հասկացության մեկնաբանությունները:

Երկրորդ՝ «Հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի փոխակերպման հիմնական միտումները», ենթագլխի նպատակն է հստակեցնել և պարզաբանել հոգեբանական պատերազմի (ՀՊ) էությունը, ինչը հնարավորություն կտա հաջորդիվ անդրադառնալ հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեքների փոխակերպման հիմնահարցին:

Երրորդ՝ «Հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի փոխակերպման հիմնախնդրի հետազոտման տեսական-մեթոդաբանական հիմքերը» ենթագլխում մանրամասն ներկայացված է խնդրի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների տեսակետները: Տեսական-մեթոդաբանական հիմքերը ներկայացված են երկու ուղղությամբ. հոգեբանական պատերազմին առնչվող գրականության աղբյուրների վերլուծություն և անձի արժեքների փոխակերպման խնդրի վերաբերյալ գիտական աղբյուրների վերլուծություն:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Անձի արժեհամակարգի փոխակերպման առանձնահատկությունների հետազոտություն: Հետազոտական տվյալների բազան» նույնպես կազմված է երեք ենթագլուխներից:

«Հոգեբանական ներգործություններով պայմանավորված անձի արժեհամակարգի փոխակերպման հետազոտության ուղղվածության հիմնավորում. հետազոտության մեթոդների համակազմը, ընտրանքը, փուլերը» ենթագլխում հիմնավորվում է կատարված հետազոտության ռազմավարությունը և կազմակերպումը:

Երկրորդ՝ «Փորձագիտական գնահատականների մեթոդի կիրառմամբ ստացված տվյալները» ենթագլխում ամփոփվում է փորձագետների հետ անցկացված խորքային հարցազրույցների արդյունքները, որն ուղղված էր հետազոտական ռազմավարության և հիմնախնդրի հստակեցմանը:

Երրորդ ենթագլխում՝ «Հոգեբանական ներգործություններով պայմանավորված անձի արժեհամակարգի առանձահատկությունների հետազոտում. հետազոտական տվյալների բազան» ներկայացվում է իրականացված հետազոտության արդյունքում ստացված քանակական տվյալները: Հետազոտության արդյունքների վերլուծությունը կատարել ենք MS office excel և SPSS վիճակագրական ծրագրային փաթեթի միջոցով: Իրականացրել ենք ընտրանքի նորմալ բաշխվածության ստուգում՝ ըստ Կոլմոգորով-Սմիրնովի չափանիշի:

Երրորդ՝ «Հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի փոխակերպման առանձնահատկություններն՝ ըստ հետազոտական տվյալների մշակման արդյունքների» գլխում ներկայացվում են հետազոտական տվյալների մշակմամբ ստացված արդյունքների վերլուծությունները: Այս գլուխը բաղկացած է 3 ենթագլուխներից, որոնցից առաջինում՝ «ԶԼՄ-ներում ներկայացված տեղեկույթի առանձնահատկությունները. ազդեցության մեխանիզմների ուսումնասիրություն» ներկայացնում է Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում մեդիա ծածկույթում ներկայացված հոդվածների շրջանակային (ֆրեյմային) վերլուծության ընթացքը և արդյունքները, ինչպես նաև կիրառվող հոգեբանական ազդեցության մեխանիզմների վերլուծությունը:

Երկրորդ՝ «Անձնային արժեքների, էքզիստենցիալության, կյանքի նպատակների ձևավորման և անձնային առանձնահատկությունների հետազոտական տվյալների մշակման արդյունքները. համահարաբերակցային վերլուծություն» ենթագլխում վերլուծվում են հոգեբանական թեստավորման արդյունքում ստացված ցուցանիշները, ներկայացվում են կատարված

համահարաբերակցային վերլուծության արդյունքները՝ հետազոտական ընտրանքի երկու խմբերում:

Հիմնվելով մեր կողմից իրականացված հետազոտությունների արդյունքների վրա՝ «Պատերազմի պայմաններում տեղեկույթի ազդեցության կառավարմանն ուղղված մեթոդական հանձնարարականներ» ենթագլխում ներկայացվում է հոգեբանական պատերազմի ոլորտի մասնագետներին ուղղված մեթոդական հանձնարարականների շարք:

Հետազոտության փուլերը: Հետազոտությունը իրականացվել է 4 փուլով:

Առաջին փուլում իրականացվել է փորձագիտական հարցում, որը հնարավորություն է տալիս բացահայտել անձի արժեհամակարգի փոխակերպման առանձնահատկությունները տեղեկութահոգեբանական ներգործության պայման-ներում: Փորձագիտական գնահատականների մեթոդի արդյունքում հստակեցվել է հետազոտության ռազմավարությունը:

Երկրորդ փուլում կատարված կոնտենտ վերլուծության արդյունքում դուրս են բերվել հայկական և ադրբեջանական մամուլում ներկայացված վերլուծական հրապարակումները Ապրիլյան քառօրյա պատերազմի դեպքերի լուսաբանման վերաբերյալ: Դուրս են բերվել ամենից հաճախ հանդիպող արտահայտություններ, որոնք ազատ ասոցիացիաների մեթոդով ենթարկվել են վերլուծության:

Երրորդ փուլում իրականացրել ենք հարցում, ինչի նպատակն էր բացահայտել տեղեկույթ ստանալու առանձնահատկությունները անկախ խմբերի շրջանում: Այնուհետև իրականացված թեստավորումն ուղղված էր բացահայտելու անձի արժեհամակարգի փոխակերպման միտումները: Ստացված փորձարարական տվյալների հիման վրա կատարվել է համահարաբերակցային վերլուծություն:

Չորրորդ փուլում կատարվել է էքզիստենցիալության ցուցանիշի համեմատական վերլուծություն պատերազմական գործողություններին անմիջապես հաջորդող և հրադադարի ռեժիմի պահպանման շրջանում, համեմատվել են երկու հետազոտական խմբերում ստացված տվյալները: Համեմատական վերլուծություն է կատարվել նաև Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակիցների շրջանում ստացված ցուցանիշների միջև:

Հետազոտության ընտրանքը: Հետազոտության գլխավոր ընտրանքը բաժանվել է երկու խմբի, որոնցում ներառվել են ՀՀ-ի ոչ սահմանամերձ շրջանների և Արցախի սահմանամերձ շրջանների երիտասարդները: Խմբերի ընտրության համար հիմք է ծառայել շփման գոտուց հեռավորությունը: Այնուհետև երկու խմբերում պարզել ենք համացանցից օգտվելու ակտիվության ցուցանիշը: Այս խմբերի առանձնացումը հնարավորություն է տալիս ուսումնասիրել արժեհա-մակարգի առանձնահատկությունները՝ ՀՀ-ում և Արցախում բնակվող

երիտասարդների արժեհամակարգի համեմատական վերլուծություն կատարելու միջոցով, հաշվի առնելով համացանցից օգտվելու ակտիվության առանձնահատկությունները:

Մեր կողմից իրականացված հետազոտության ընտրանքում ներառվել են 18-25 տարեկան 200 երիտասարդներ: Այս տարիքային խմբի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակչության այս շերտն առավել արագ և ակտիվ է արձագանքում հասարակությունում տեղի ունեցող փոփոխություններին: Երիտասարդների խումբը, ներմուծելով սեփական արժեքային կողմնորոշումները, վարքի մոդելները և մտածողության կարծրատիպերը, փոփոխություններ է առաջացնում հասարակության մեջ: Նրանց արժեքներն են մոտ ապագայում կանխորոշելու ողջ հասարակության զարգացման ուղղվածությունն ու արժեքները: Հետևաբար, հայ երիտասարդների արժեքային համակարգի ժամանակակից միտումների ուսումնասիրությունը հնարավորություն կտա դիտարկել արժեքային գիտակցության փոխակերպման գործընթացը:

Հետազոտության ընտրանքի սահմանման նպատակով կատարվել է պարզ հավանականային ընտրանք, մասնավորապես՝ գլխավոր համախմբություն հանդիսացող 202 հոգուց առանձնացվել է 100 հոգուց բաղկացած ընտրանքային համախմբություն, որի համար կիրառվել է ընտրանքի հաշվարկման բանաձև:

Հետազոտության մեթոդները: Հաշվի առնելով գլոբալացվող հասարակությունում տեղեկատվական համակարգերի ներթափանցումը կյանքի բոլոր ոլորտներում, ինչը խոչընդոտում է իրականացվող հետազոտության ընթացքում բազմաթիվ անկախ փոփոխականների վերահսկումը, մեր կողմից կիրառվել է քվազիէքսպերիմենտի մեթոդը: Տվյալ մեթոդը կիրառվում է պատճառն ու հետևանքը ստուգելու նպատակով:

Քվազիէքպերիմենտալ հետազոտությունները փոխում են պատճառային-գործող գործոնի հասկացումը. անկախ փոփոխականի պայմանը միայն դրսևորում է խորքային պատճառների ազդեցություն, որոնք ենթադրում են քվազիէքսպերիմենտալ մոտեցման բազիսային փոփոխականներ: Փորձարարական պայմանները ստեղծվում են, որպեսզի բացահայտեն նրա ներգործությունը և ոչ թե իրականացնեն ներգործություն:

Հաշվի առնելով քվազիէքսպերիմենտի առանձնահատկությունները՝ մշակել ենք հետազոտության ռազմավարություն, ձևավորել հետազոտական ընտրանք և ընտրել հետազոտության մեթոդաբանությունը: Ելնելով հետազոտության նպատակից և խնդիրներից կիրառվել են հետևյալ մեթոդները.

- Փորձագիտական գնահատականների մեթոդ,
- Կոնտենտ վերլուծություն,

- Ազատ ասոցիացիաների մեթոդ,
- Հարցման մեթոդ,
- Հոգեբանական թեստավորման մեթոդ:

Փորձագիտական գնահատականների մեթոդի արդյունքում հետազոտության ռազմավարությունը հստակեցնելուց հետո իրականացվել է ***կոնտենտ վերլուծություն***, որի նպատակն էր բացահայտել ՁԼՄ-ներում կիրառվող մարտավարությունները: Արդյունքում դուրս են բերվել հայկական և ադրբեջանական մամուլում ներկայացված վերլուծական հրապարակումները Ապրիլյան քառօրյա պատերազմի դեպքերի լուսաբանման հետ կապված: Առանձնացվել են չորս լրատվական կայք՝ երկու հայկական, երկու ադրբեջանական: Կայքերի ընտրությունը կատարվել է ըստ այցելությունների վրա հիմնված վարկանիշի: Կայքերի ընտրության համար հիմք ենք ընդունել similiarweb.com կայքի տվյալները: Կայքում ներկայացված են գլոբալ ցանցի վարկանիշային և վիճակագրական անկախ և հավաստի տվյալներ աշխարհի ավելի քան ութսուն միլիոն կայքերի այցելությունների վերաբերյալ: Կայքը համացանցային շուկայի վերլուծության միակ հավաստի աղբյուրն է:

Այսպիսով, բովանդակային վերլուծության են ենթարկվել այն կայքերը, որոնք ունեն նշված երկրներում այցելությունների առավել բարձր ցուցանիշ, ինչը ներառում է նաև այլ երկրներից կայքի այցելությունները: Այսինքն, եթե ադրբեջանական disput.az-ը ունի լրատվական կայքերի շարքում ամենաբարձր ցուցանիշը, սակայն չունի այցելություններ կամ դրանց թիվն աննշան է Հայաստանից, մենք վերլուծության համար ընտրել ենք վարկանիշով այդ կայքին մի քանի հորիզոնականով զիջող, սակայն Հայաստանից ավելի մեծ թվով այցելություններ ունեցող մեկ այլ լրատվական կայք:

Բովանդակային վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ ադրբեջանական մամուլում մեծ տեղ են գրավում ծաղրի և լռեցման մանիպուլիատիվ հնարքները, իսկ հայկական մամուլում տեղեկույթի կրկնողությունը և հեղինակության վկայակոչումը:

Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում մեդիա լուսաբանման բովանդակային վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս առանձնացնել տեղեկութային ֆրեիմների մի քանի կատեգորիա, որոնցից յուրաքանչյուրն ունի ազդեցության որոշակի թիրախ: Կոնտենտ վերլուծության արդյունքում առանձնացրել ենք հետևյալ շրջանակները՝ տեղեկութային, գործողության, նույնականացման, նկարագրողական, փորձագետի կարծիք կամ հեղինակության վկայակոչում:

Բովանդակային վերլուծության արդյունքում դուրս են բերվել ամենից հաճախ հանդիպող արտահայտությունները, որոնք ազատ ասոցիացիաների մեթոդով ենթարկվել են վերլուծության: Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ հետազոտական երկու խմբերում զուգորդությունների բնույթը տարբերվում է. շփման գոտում բնակվող անձանց շրջանում զուգորդություններն առավել առարկայական բնույթ ունեն, մինչդեռ շփման գոտուց դուրս բնակվող անձանց շրջանում դրանք վերացական են, ինչից կարող ենք ենթադրել, որ առաջին խմբի դեպքում գործ ունենք իրական պատերազմի հետ, իսկ երկրորդի դեպքում՝ վիրտուալ:

Փորձագիտական հարցման մեթոդի միջոցով պարզել ենք բովանդակային վերլուծության ենթարկված հոդվածների վերնագրերի սենտիմենտը (դրական, բացասական, չեզոք): Այնուհետև հարցման մեթոդի միջոցով պարզել ենք՝ ինչ ընկալում է առաջացնում տվյալ վերնագիրը հետազոտության մասնակիցների շրջանում: Այս նպատակով առանձնացրել ենք հետազոտության ևս մեկ խումբ՝ Ապրիլյան պատերազմի մասնակիցներին նույնպես նեգրավվելով հետազոտության մասնակիցների մեջ: Գծապատկեր 1-ում ներկայացված է փորձագետների կողմից առանձնացված սենտիմենտների և հետազոտության մասնակիցների կողմից տրված գնահատականների համեմատությունը: Ուշագրավ է, որ հայկական կայքերի վերնագրերի դեպքում հետազոտության մասնակիցները ճշգրտորեն որոշում են տրվող հաղորդագրության հուզականությունը (ՀՀ ընտրանքի դեպքում 100 % ճշգրտությամբ, Արցախի ընտրանքի և Ապրիլյան պատերազմի մասնակիցների դեպքում՝ 40 %): Ի տարբերություն վերը նշվածի՝ ադբրեջանական կայքերի վերնագրերի դեպքում հետազոտության մասնակիցները հոդվածների սենտիմենտը որոշել են համապատասխանաբար՝ 27 %, 40 % և 27 % ճշգրտությամբ: Ստացված արդյունքները փաստում են այն մասին, որ հայկական մամուլը լրատվություն տրամադրելիս մասամբ է հաշվի առնում լսարանի առանձնահատկությունները և հաղորդագրությունը կառուցում է այնպես, որ այն փոխանցելով տեղեկույթը՝ առաջացնի ցանկալի հույզեր: Հետազոտության արդյունքներից պարզ է դառնում, որ լրատվամիջոցների աշխատանքի մարտավարությունն արդյունավետ է հասարակության ոչ բոլոր խմբերի համար:

Ադրբեջանական մամուլի ընտրած մարտավարությունը ՀՀ լսարանի վրա ազդեցություն ունենալու տեսակետից նվազ արդյունավետ է, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ադրբեջանական կայքերի ընտրության հարցում հիմք ենք ընդունել Հայաստանից կայքի այցելությունների բարձր ցուցանիշը: Արցախի երիտասարդների շրջանում ադրբեջանական մամուլից

ընտրված հոդվածների վերնագրերն առավել ճիշտ են ընկալվում, քան ընտրանքի մյուս երկու խմբերի շրջանում. հետազոտության մասնակից երիտասարդները ՀՀ-ից և Ապրիլյան պատերազմի մասնակիցները հակված են ադրբեջանական մամուլում ներկայացված հոդվածները ընկալել առանց հուզականության՝ գնահատելով վերջիններս որպես չեզոք: Մինչդեռ հայկական մամուլում տեղ գտած նույնիսկ բացասական կամ չեզոք վերնագրերը Արցախի երիտասարդները և Ապրիլյան պատերազմի մասնակիցներն ընկալում են որպես դրական:



***Գծապատկեր** 1.* Փորձագիտական գնահատականների և հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն

Երբ օբյեկտի նկատմամբ անձն ունի դրական վերաբերմունք, ապա դրա նկատմամբ համակրանք է զգում, իսկ բացասական զգացմունքների դեպքում՝ հակակրանք: Այս պարագայում կարող ենք ենթադրել, որ գործում է վերոնշյալ մեխանիզմը և ելնելով այն հանգամանքից, որ հայ երիտասարդների շրջանում ամրապնդված է թշնամու կերպարը, ուստի ադրբեջանական մամուլի կողմից ներկայացվող տեղեկույթը հակակրանք է առաջացնում:

Անցանկալի տեղեկույթը կարող է անտեսվել, չընկալվել կամ մեկնաբանվել անձի համար ցանկալի կերպով: Այս դեպքում գործ ունենք իմացական գործընթացների հետ կապված պաշտպանական մեխանիզմների հետ (զգայություն, ուշադրություն և ընկալում): Նկատենք, որ ընկալումն է պատասխանատու այն պաշտպանական մեխանիզմի համար, որը կապված է տեղեկույթը չհասկանալու հետ: Նման պաշտպանական մեխանիզմներից է ժխտումը: Որպես կանոն, այս պաշտպանական մեխանիզմի հաճախակի դրսևորման դեպքում անձին բնորոշ է հուզական հասունության ցածր մակարդակը:

Այս փուլում իրականացվել է նաև թեստավորում, ինչն ուղղված էր բացահայտել անձի արժեհամակարգի փոխակերպման միտումները:

Մեթոդիկաների ընտրության համար հիմք է հանդիսացել անձի արժեհամակարգը կազմող բաղադրիչների ուսումնասիրությունը: Մենք արժեհամակարգը դիտարկում ենք որպես սոցիալականացման ընթացքում ձևավորվող կայուն վերաբերմունք, որը կապված է անձնային իմաստի հետ և դրսևորվում է վարքում: Արժեհամակարգը ձևավորող հիմնական բաղադրիչները, որոնց բացահայտմանն էլ ուղղված է հետազոտությունը, ներկայացված են գծապատկեր 2-ում:



***Գծապատկեր** 2.* Անձի արժեհամակարգի բաղադրիչները

Անդրադառնալով թեստավորման արդյունքներին՝ նշենք, որ շփման գոտում և շփման գոտուց դուրս բնակվող երիտասարդների շրջանում արժեքային առանձնահատկությունների համեմատության արդյունքում բացահայտվել է, որ արժեքների հիերարխիայում առաջին եռյակը կազմում են ՀՀ հետազոտական խմբում՝ ունիվերսալիզմ, կամեցողություն, ինքնուրույնություն, իսկ Արցախի հետազոտական խմբում՝ ունիվերսալիզմ, անվտանգություն, կամեցողություն:

Հետաքրքրական է, որ հետազոտական խմբերում զգալի են տարբերությունները արժեքների դասակարգման սոցիալական և անձնային պրոֆիլների միջև: Արժեքների խզումը հատկապես մեծ է ՀՀ հետազոտական խմբում ունիվերսալիզմ, կամեցողություն, ինքնուրույնություն արժեքների միջև, իսկ Արցախի երիտասարդների շրջանում՝ ունիվերսալիզմ, կամեցողություն, անվտանգություն արժեքների միջև:

Այս փաստը կարող ենք մեկնաբանել սոցիալական միջավայրի առանձնահատկություններով, երբ անձի համար իրապես նախընտրելի արժեքները չեն դրսևորվում վարքում, փոխարենը դրսևորվում են այդ արժեքները, որոնք սոցիալապես ընդունելի են կոնկրետ պայմաններում:

Համահարաբերակցային վերլուծության արդյունքներից տեսնում ենք, որ ՀՀ ընտրանքի շրջանում բացահայտվել են դրական կոռելյացիոն կապեր էքզիստենցիալության ցուցանիշի և ինքնուրույնություն, հաստատակամություն, ինքնատիրապետում, հուզական կայունություն ցուցանիշների, ինչպես նաև բացասական կոռելյացիոն կապ էքզիստենցիալության և լարվածություն, տագնապալիություն, երազկոտություն ցուցանիշների միջև:

Արցախի ընտրանքի շրջանում առկա են կոռելյացիոն կապեր էքզիստենցիալության և ճկունություն, մարդամոտություն, կյանքի հուզական հագեցվածություն ցուցանիշների միջև, ինչպես նաև բացասական կոռելյացիոն կապ էքզիստենցիալություն և տագնապալիություն ցուցանիշների միջև:

Ստացված արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ սեփական անձի անվտանգության ու կայունության պահանջմունքի աճին զուգընթաց առավել հստակ են դառնում ապագայի նպատակները, վերահսկողության լոկուսն ուղղվում է սեփական անձին ու մեծանում է կյանքի իմաստավորվածության սուբյեկտիվ ընկալումը:

Երիտասարդների մոտ առավել արտահայտված է բարեխղճության ցուցանիշը, սակայն այս որակը կարիք ունի հետագա զարգացման, քանի որ դա, ինչպես ցույց են տալիս համահարաբերակցային վերլուծության արդյունքները, կհանգեցնի արժեքների ընտրողականության մեծացմանը: Երիտասարդների մոտ կամքի ինքնակարգավորման ցուցանիշը միջին է, կարող ենք ասել, որ նրանք հուզականորեն կայուն են, հակված են կամային ինքնակարգավորման, սովորաբար իրավիճակների մեծամասնությունում կարողանում են վերահսկել իրենց վարքային դրսևորումները:

Միջին դրսևորում ունի ինքնուրույնության ցուցանիշը, ինչը նույնպես անհրաժեշտ է զարգացնել: Այս որակի դրսևորման աճին զուգընթաց մեծանում է անձի պատասխանատվության զգացումը, ինչպես նաև առավել հստակ են դառնում ապագայի նպատակները, ու մեծանում է կյանքի իմաստավորվածության սուբյեկտիվ ընկալումը: Որքան անձն ավելի մեծ պատասխանատվություն է զգում իր գործողությունների և կյանքի համար, այնքան մեծանում է քննադատական մտածողության կարողությունը, դատողություններում նվազում են կարծրատիպային ձևերը, նվազում է հեղինակություններին վստահելու հավանականությունը:

Անձն այս դեպքում առավել ինֆորմացված է դառնում, ընդլայնվում է ինտելեկտուալ հետաքրքրությունների շրջանակը:

Հետազոտության չորրորդ փուլում կատարվել է կյանքի հագեցվածության ցուցանիշի համեմատական վերլուծություն պատերազմական գործողություններին անմիջապես հաջորդող և հրադադարի ռեժիմի պահպանման շրջանում:

Ամփոփելով կյանքի իմաստավորվածության ախտորոշման տվյալները, կարող ենք փաստել, որ ՀՀ և Արցախի հետազոտական խմբերում առկա է չափավոր էքզիստենցիալ հագեցվածություն: Ինչը նշանակում է, որ անձը ընդունակ է գնալ արտաքին աշխարհի պահանջներին և առաջարկներին ընդառաջ, ինքնամփոփությունը փոխարինվում է երկխոսության մեջ մտնելու հուզական պատրաստվածությամբ:

Համեմատելով երկու խմբերի հետազոտական տվյալների մշակմամբ ստացված արդյունքները Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակիցների շրջանում կյանքի հագեցվածության ցուցանիշների հետ՝ տեսնում ենք, որ վերջինների շրջանում ցուցանիշներն ունեն բարձր դրսևորում: Միայն ինքնավերացարկում սանդղակի ցուցանիշը ունի միջին դրսևորում: Էքզիստենցիալության բարձր ցուցանիշը նշանակում է, որ զարգացած են անձի՝ կյանքը լիարժեք ապրելու հնարավորությունները, սակայն անձը կարող է թույլ լինել հուզական զգացողություններում: Կարող ենք ենթադրել, որ անձը հարմարված է կյանքին: Էքզիստենցիալության բարձր ցուցանիշը վկայում է, որ անձը վճռական է, պատրաստ է գործողությունների դիմել, ունի պարտքի զգացում: Միաժամանակ իր առջև դնում է բարձր պահանջներ, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ սպոնտանության, ստեղծարարության, առանց պլանավորման ապրելու համար:

Այսպիսով, կարող ենք ասել, որ հետազոտական այս խմբի դեպքում գործ ունենք անձի մոտ սեփական կյանքի բարձր հագեցվածության սուբյեկտիվ ընկալման հետ:

Ազատության ցուցանիշի բարձր լինելը այս հետազոտական խմբում նշանակում է, որ պատերազմական գործողությունների մասնակիցներն առավել հեշտ են գործողությունների համար հնարավորություններ գտնում և հեշտ են որոշում կայացնում: Երբեմն կարող է բնորոշ լինել քննադատական և գնահատողական վերաբերմունք, դոմինանտության ձգտում: Ազատության զգացման առավել բարձր ցուցանիշների դեպքում անձը հակված է լինում խուսափել կապվածություններից և կայուն ու երկարատև միջանձնային հարաբերություններից: Կարծում ենք, որ այս առանձնահատկությունները կարող են պայմանավորված լինել պատերազմական գործողություններին մասնակցելու

հանգամանքով, քանի որ մահվան, կորստի վտանգը ապրելու դեպքում անձը կարող է կարևորել կյանքը և պատասխանատվություն դրսևորել կյանքի հանդեպ:

Կյանքի էքզիստենցիալ հագեցվածության ցուցանիշի տարբերությունները մարտական գործողություններին մասնակցած և չմասնակցած երիտասարդների շրջանում հնարավորություն է տալիս եզրակացնել, որ արտակարգ իրավիճակներում գտնվելը անձի մոտ հանգեցնում է կյանքի վերարժևորման, ինչի արդյունքում մեծանում է վճռականությունը և պատասխանատվությունը, աճում է կյանքի հագեցվածության զգացումը:

Ինչն էլ հնարավորություն է տալիս հաստատել հետազոտության վարկածը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Անձի արժեհամակարգը ձևավորվում է հասարակության հետ փոխազդեցության պայմաններում, այն հանդես է գալիս որպես կյանքի իմաստի նկատմամբ անձի վերաբերմունք և դրսևորվում է վարքում:

2.Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում մեդիա լուսաբանման կոնտենտ վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս առանձնացնել տեղեկութային շրջանակների մի քանի կատեգորիա, որոնցից յուրաքանչյուրն ունի ազդեցության որոշակի թիրախ: Առանձնացված շրջանակներն են՝ տեղեկութային, գործողության, նույնականացման, նկարագրողական, կորուստ-հաղթանակ, հեղինակության վկայակոչում կամ փորձագետի կարծիք, ԼՂՀ կարգավիճակ, կոչ միջազգային հանրությանը, դաշնակցային հարաբերություններ: Առկա է ուղղորդված տեղեկութային ազդեցություն, ինչը միտված է հակառակորդի շարքերում վախն ուժեղացնելուն, տարաձայնություններ բորբոքելուն և անհնազանդություն տարածելուն:

3.Հիմք ընդունելով համացանցից օգտվելու ակտիվության ցուցանիշների տարբերությունը հետազոտական ընտրանքի երկու խմբերում, կարող ենք եզրակացնել, որ համացանցից օգտվելու նվազ ակտիվությունը Արցախի երիտասարդների շրջանում խոչընդոտ չէ տեղեկույթ ստանալու համար: Ինչպես նաև համացանցից օգտվելու ակտիվության տարբերությունները չեն հանգեցնում փոփոխությունների կյանքի հագեցվածության սուբյեկտիվ ընկալման մեջ: Միևնույն ժամանակ, հոգեբանական պատերազմի համատեքստում գոյություն ունեն ընկալման տարբերություններ՝ կախված տեղեկույթի աղբյուրից: Հայկական մամուլում ներկայացված նյութը ընկալվում է իր իրական նշանակությամբ, մինչդեռ ադրբեջանական մամուլում ներկայացված տեղեկույթը ընկալվում է չեզոք հուզականությամբ: Սա վկայում է պաշտպանական մեխանիզմների մասին, որոնք ստեղծում են ընկալման պատնեշ՝ ձևավորելով կարդացվող նյութի հանդեպ անտարբերություն:

4.Շփման գոտում և շփման գոտուց դուրս բնակվող անձանց շրջանում արժեքային առանձնահատկությունների համեմատության արդյունքում բացահայտվել է, որ արժեքների հիերարխիայում առաջին եռյակում ՀՀ հետազոտական խմբում՝ ունիվերսալիզմ, կամեցողություն, ինքնուրույնություն, իսկ Արցախի հետազոտական խմբում՝ ունիվերսալիզմ, անվտանգություն, կամեցողություն արժեքներն են: Մինչդեռ արժեքների անձնային պրոֆիլի հետազոտության արդյունքում երկու հետազոտական խմբերում արժեքները բաշխված են միևնույն կերպ. ունիվերսալիզմ, անվտանգություն, ինքնուրույնություն արժեքներն առաջնային են:

5.Կատարված հետազոտությունները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ սեփական անձի անվտանգության ու կայունության պահանջմունքի աճին զուգընթաց առավել հստակ են դառնում ապագայի նպատակները, վերահսկողության լոկուսն ուղղվում է սեփական անձին ու մեծանում է կյանքի իմաստավորվածության սուբյեկտիվ ընկալումը:

6.Հուզական կայունության մակարդակի աճին զուգահեռ մեծանում են անձի ներքին ազատությունն ու օբյեկտիվությունը, նա պատրաստ է լինում պատասխանատվություն ընդունել սեփական կյանքի համար: Ինքնատիրապետման ընդունակության աճին զուգընթաց աճում են հուզական ընկալունակությունն ու արժեքների ընտրողականությունը:

7.Պատերազմական գործողություններից անմիջապես հետո և հրադադարի պահպանման ռեժիմի ընթացքում իրականացված հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ էքզիստենցիալության ցուցանիշը չի ենթարկվում փոփոխությունների տեղեկութային ազդեցության ներքո:

8.Կյանքի էքզիստենցիալության ցուցանիշի տարբերությունները մարտական գործողություններին մասնակցած և չմասնակցած երիտասարդների շրջանում հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ արտակարգ իրավիճակներում գտնվելը անձի մոտ հանգեցնում է կյանքի վերարժևորման, ինչի արդյունքում մեծանում է վճռականությունը և պատասխանատվությունը, աճում է կյանքի իմաստավորվածության սուբյեկտիվ ընկալումը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ հրապարակումներում.

1. Զեյնալյան Ն. Ա., Տեղեկութահոգեբանական գործոնի կառավարման խնդիրներն անձի արժեքների փոխակերպման գործում, Այլընտրանք գիտական հանդես, հմ. 2, 2019, 273 էջ, 45-51:

2. Զեյնալյան Ն. Ա., Անձի արժեհամակարգի և կյանքի նպատակների փոխպայմանավորվածությունը հոգեբանական պատերազմի պայմաններում, «Պետական ծառայություն», Եր., հմ. 1, 2019, 282 էջ, 252-258:
3. Զեյնալյան Ն. Ա., Արժեհամակարգի և էքզիստենցիալության փոխպայմանավորվածությունը հոգեբանական պատերազմի պայմաններում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», հմ. 3-4, 2018, 139 էջ, 9-13:
4. Զեյնալյան Ն. Ա. Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում ԶԼՄ-ներում ներկայացված տեղեկույթի առանձնահատկությունները, Արդի հոգեբանության հիմնախնդիրները, Անտարես, Եր., հմ. 1, 2018, 126 էջ, 46-56:
5. Զեյնալյան Ն. Ա. Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները, «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» գիտաժողովի նյութերի ժողովածու, Հատուկ թողարկում, միջազգային գիտաժողով, «Պետական ծառայություն», Եր., հմ. 3-4, 2017, 549 էջ, 44-53:
6. Զեյնալյան Ն. Ա. «Անձնային արժեք» հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն», Եր., հմ. 2, 2017, 191 էջ, 151-161:
7. Զեյնալյան Ն. Ա. Տեղեկատվական-հոգեբանական պատերազմը որպես պատերազմող երկրի բնակչության տագնապի պատճառ, Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, V միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Էդիտ պրինտ» հրատ., 2015, 686 էջ, 114-118:
8. Зейналян Н. А., Влияние психологической войны на формирование системы личностных ценностей и проблема обучения медиаграмотности, “Высшая школа: опыт, проблемы, перспективы”. Науч. ред. В. И. Казаренков. М., РУДН, 2019, 429 с., сс. 112-116
9. Zeynalyan N. A., The Peculiarities of Social Perception in the Context of Information-Psychological Warfare, “International Conference on Science and Education” Conference Proceedings Vol 4, 2016, pp. 499-504, http://dx.doi.org/10.12955/cbup.v4.803

НАНЕ ЗЕЙНАЛЯН
ОСОБЕННОСТИ КОМПОНЕНТОВ СИСТЕМЫ ЦЕННОСТЕЙ ЛИЧНОСТИ В КОНТЕКСТЕ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ВОЙНЫ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 - “Общая психология, теория и история психологии, психология личности”.

Защита диссертации состоится 25 августа, в 15:00, на заседании специализированного совета по психологии 067 ВАК по присуждению ученых степеней при Ереванском Государсвенном Университете.
Адресс: 0025, ул. Абовяна 52 а, Ереван, Армения

РЕЗЮМЕ

Актуальность. В последние годы научный интерес к системе личностных ценностей возрос в различных областях. Среди причин такие процессы, как внутренние социальные проблемы, различное информационное воздействие, а также события, обусловленные глобализацией, которые приводят к деформации национальных, социальных и культурных систем.
В настоящее время изучение влияния информационной войны на формирование системы личностных ценностей имеет важное значение для выявления последствий психологической войны, сопровождающей Нагорно-карабахский конфликт. В связи с этим, актуальность темы исследования обусловлена информационно-психологическим воздействием противника, направленной на преобразование ценностей личности, а также долгосрочностью армяно-азербайджанского конфликта, который после соглашения о прекращении огня в основном перемещается в область информацой войны.

Цель исследования: Исследовать особенности проявления компонентов системы личностных ценностей, обусловленных влиянием информации в контексте психологической войны.

Гипотеза исследования. Особенности компонентов системы ценностей личности в контексте психологической войны подвержены изменениям, обусловленным целями в жизни и экзистенцией.

Объектом исследования является система ценностей личности.

Предметом исследования являются особенности проявления системы личностных ценностей в контексте психологической войны.

Основные задачи исследования:

Для достижения цели исследования были предложены следующие серии задач:

1. Исследовать проблемы формирования системы личностных ценностей в современных научных дисциплинах.

2. Проанализировать особенности информации, представленной как в азербайджанских, так и в армянских СМИ, и сформулировать их закономерности.
3. Изучить и выяснить индекс активности использования Интернета, а также психологические закономерности восприятия информации, представленной в новостях, как среди населения, проживающего в зоне контакта, так и среди людей, проживающих за пределами.
4. Исследовать существующие различия между ценностями среди жителей Нагорного Карабаха и Армении. Объяснить тенденции трансформации системы личностных ценностей в контексте психологической войны.
5. Экспериментальным путем выяснить и проанализировать взаимосвязь системы личностных ценностей, экзистенцией и формированием целей в жизни.
6. Выяснить взаимозависимость личностных характеристик и формированием ценностной системы.

Практическая значимость исследования. Полученные данные могут быть использованы в учебных программах для журналистов с целью учета особенностей предоставления информации, управления чрезвычайными ситуациями посредством информации, прогнозирования эффективности информации, представленной в СМИ. Данные исследования также могут быть использованы для обучения учителей и педагогов, с целю повышения позитивного влияния в формировании системы ценностей среди молодежи. Проведенный анализ может способствовать разработке подходов по формированию системы ценностей, разработке способов преодоления экзистенциальных кризисов, а также в психотерапевтической работе и в процессе психологической реабилитации участников войны.

Научная новизна исследования. Результаты количественного и качественного анализа данных исследования позволили выявить различия между проявлением характеристик системы личных ценностей людей, живущих как в условиях войны, так и не войны. Было доказана взаимозависимость экзистенции и целей в жизни. Выявлены иерархические различия в личностных ценностях, обусловленные фактом проживания в зоне контакта и вне зоны контакта.

Структура диссертации. Диссертация изложена на 157 страницах и состоит из введения, трех глав, выводов, списка литературы.

По теме диссертации опубликовано 9 научных статей.

NANE ZEYNALYAN

PECULIARITIES OF THE COMPONENTS OF PERSONAL VALUE SYSTEM IN THE CONTEXT OF PSYCHOLOGICAL WARFARE

Dissertation for acquiring a degree of a candidate of psychological sciences. Field of specialization: 19.00.01 "General Psychology, Theory and History of Psychology, Personality Psychology".

The defence of the dissertation will be held on 25th August, at 15:00, 2020, the Specialized Council 067 of Psychology of the SCC RA acting at Yerevan State University.

Address: 0025, Abovyan 52 a, Yerevan, Armenia

ABSTRACT

Relevance: In recent years, the scientific interest towards the value system of a person has grown in various fields. Among the reasons are processes such as domestic social issues, various information impacts, as well as developments conditioned by globalization, that lead to the deformation of national, social and cultural systems. In the modern political and social life, along with the growing role of information in all areas of life, wars are mostly fought in the information realm. Therefore, the informational aspect of psychological warfare is at the center of our study.

Nowadays, the study of the impact of information warfare on the formation of a personal value system is important in order to find out the consequences of the psychological warfare accompanying the Nagorno-Karabakh conflict. In this context, the relevance of the research topic is conditioned by the information-psychological impact of the opponent aimed at transforming the values of the person as well as by the longevity of Armenian-Azerbaijani conflict, which has mostly moved to the domain of information warfare after the ceasefire agreement.

The aim of the research: Explore the peculiarities of the manifestation of the components of personal value system conditioned by the influence of information in the context of psychological warfare.

Hypothesis of the research: The peculiarities of the components of personal value system in the context of psychological warfare are subject to change conditioned by the purpose in life and existence.

The object of the research is the value system of person.

The subject of the research are the peculiarities of manifestation of personal value system in the context of psychological warfare.

The objectives of the research: To achieve the goal of the research, the following series of tasks were proposed:

1. Study the issues of the formation of personal value system in modern disciplines.

2. Analyze the features of the information presented in both the Azerbaijani and Armenian media and formulate the patterns.
3. Explore and find out the activity index of Internet usage, as well as psychological patterns of the perception of information presented in the news both among the population living in the contact zone and among those living outside.
4. Explore the existing differences between the values among the residents of Nagorno-Karabakh and Armenia. Explain the tendencies of transformation of personal value system in the context of psychological warfare.
5. In an experimental way find out and analyze the interconnection of personal value system, existence and purpose in life.
6. Clarify the interdependence of personal characteristics and the formation of value system.

Practical significance of the research: The obtained data can be used in the training programs for journalists in order to take into account the peculiarities of presenting the information, emergency management through the information, forecasting the effectiveness of the information presented in the media. The research data also can be used for trainings of teachers and educators to play a positive role in the formation of value system among youth. Analysis conducted can contribute to the development of approaches on the formation of value system, developing ways to overcome existential crises, as well as in psychotherapeutic work and in the process of psychological rehabilitation of the participants of war.

Scientific novelty of the research: The results of the quantitative and qualitative analysis of the research data made it possible to find out the differences between the manifestation of the characteristics of personal value system of people living both in the conditions of war and non-war. The interdependence of a person's existence and purpose in life has been proven. The hierarchical differences in the personal values have been revealed conditioned by the fact of living in the contact zone and outside the contact zone.

The structure of the dissertation. The dissertation is presented on 157 pages and consists of an introduction, three chapters, conclusions, and a list of references. On the topic of the dissertation 9 scientific articles were published.